ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՈՒ ՔԱՀԱՆԱՆԵՐ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ ՀՌՉԱԿՎԵՑԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Հայ Առաքելական Եկեղեցու երկու քահանաներ՝ Տ. Հակոբ քհն. Պետրոսյանը և Տ. Գրիգոր քհն. Ավետիսյանը, դեկտեմբերի 1-ից կարգալույծ են հռչակված:

Հայրապետական վճիռը կայացվել է՝ նկատի առնելով, որ վերոհիշյալ երկու քահանաները լքել են իրենց վստահված հոտը և, հակառակ եղած հորդորների ու թելադրանքների, շարունակում են իրենց բողոքի ցույցը՝ դրսևորելով անհնազանդության ոգի և հայ հոգևորականին անհարիր վարք: Նկատի է առնված նաև սույն թվականի հոկտեմբերի 22-ի Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստի որոշումը՝ Տ. Հակոբ քհն. Պետրոսյանին և Տ. Գրիգոր քհն. Ավետիսյանին կարգալույծ անելու մասին: Կարգալույծ արված քահանաներն այլևս դասվում են աշխարհականների շարքը և կկոչվեն իրենց աշխարհիկ անուններով՝ Աշոտ Պետրոսյան և Արծրուն Ավետիսյան:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ